# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Յունուար ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյս **Տնօրէն Ժողովը** չորս, իսկ **Կրօն. Գեր. Ատեանը՝** երեք անգամներ նիստ ունեցաւ։

● Ուր. 1 Յուն. — Եւրոպական Նոր Տարւոյ առթիւ, ըստ սովորութեան, Սրբազան Պատրիարքը շնորհաւորական գրութիւններ և քարտեր յղեց Կառավարական, Հիւպատոսական մարմնոց և Հաստատութեանց։

● Շբ. 2 Յուն. — Արքայական Յանձնաժողովոյ Նախագահը և անդամք վանուցս գանձարանի կարգ մը առարկաները տեսան Մայր Տաճարին մէջ. յետոյ Պատրիարքարան ելնելով, ընդունեցին Ս. Պատրիարք Հօր թէյի պատիւը։

● Գշ. 5 Յուն. — Ս. Աթոռոյ տօնը հանդիսաւորուեցաւ մեծ շուքով. Սրբազան Պատրիարքը «Փառք ի բարձունս»ի առեն ըստ վաղնջական աւանդութեան, առաքելական պատմական Աթոռն ելաւ։ Տ. Մկրտիչ Սրբազան պատարագեց և քարոզեց Ս. Աթոռոյ նշանակութեան մասին, և մաղթանքներ ըրաւ Հաստատութեան և Ս. Աթոռակալին համար։

● Եշ. 7 Յուն. — Ս. Ստեփաննոսի տօնախմբութիւնը կատարուեցաւ սովորական հանդիսաւորութեամբ, տասնևհինգ սարկաւագներ, ուղղափառ և բուրվառակիր, «Փառք ի բարձունս»ի առեն ելան, առարկայ դառնալով հոծ ժողովրդեան բարեպաշտ զմայլանքին։ Ս. Պատրիարքը քարոզեց ըստ պատշաճի աւուրն։

● Շբ. 9 Յուն. — Ս. Պետրոս և Ս. Պօղոս առաքելոց տօնը կատարուեցաւ աւանդական վայելչութեամբ և Ս. Պատարագի մատուցմամբ։

● Կիր. 10 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, ուր քարոզեց Տ. Տիրան Վրդ., «Զընթացս կատարեցի» բնաբանով. բացատրեց թէ կեանքը ընթացք մը, «վազք» մըն է, որ իր արժէքը իր նպատակէն կ'առնէ, այդ ընթացքը պէտք չէ ըլլայ «ընդունայն», պէտք չէ ըլլայ «ի չարիս»։

● Բշ. 11 Յուն. — Ս. Գլխադրի տօնին առթիւ մեծահանդէս ժամերգութիւն և Պատրիարքական Պատարագ։ Ս. Պատրիարք Հօր խօսած քարոզը հրատարակուած է Սիոնի այս թիւին մէջ։ Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ երիցս դարձմամբ թափօր Ս. Խաչափայտի մասանց։

● Դշ. 13 Յուն. — Հին Տօմարով տարեմուտի առթիւ, Միաբանութիւն երեկոյին, ժամերգութենէն յետոյ, Պատրիարքարան ելաւ։ Սրբազան Պատրիարքը, յետ պատշաճ խօսից, Օրացոյց բաշխեց ամէնուն։

● Եշ. 14 Յուն. — Ամանոր ըստ Հին Տօմարի։ Ս. Պատրիարքը այդ առթիւ քարոզեց, ապա Պատրիարքարանի Մեծ Դահլիճին մէջ տեղի ունեցաւ աւանդական գումարումը. մասնակցութեամբ Միաբանութեան, ժողովուրդին և աշակերտաց. Ուղերձներ խօսեցան Տ. Մկրտիչ Սրբազան Աղաւնունի, Յովսէփ Սարկաւագ և ժառանգաւորաց եւ քաղաքացւոց վարժարանի աշակերտներ։ — Ս. Պատրիարքը սիրով եւ օրհնութեամբ պատասխանեց ամէնուն։ — Կէսօրէ վերջ Ս. Պատրիարքը Տնօրէն Ժողովոյ հետ ժառանգաւորաց այցելեց, և դարձեալ ուղերձ և օրհնութեան խօսքեր եղան։ — Պետական Պաշտօնատարք, Հիւպատոսներ, Հաստատութեանց Տնօրէններ առանց բացառութեան Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական այցի եկան։

● Կիր. 17 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, ուր քարոզեց Տ. Սիոն Վրդ., նիւթ առնելով օրուան աւետարանէն, բացատրեց թէ ըստ աւետարանի մտաց, ճշմարիտ իշխանութիւնը այն է որ ամենէն աւելի տոգորուած է ծառայութեան հոգւով։

● Բշ. 18 Յուն. — Ս. Ծննդեան ճրագալոյցին օրը, Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը պաշտօնական շքերթով ցերեկէն առաջ գնաց Բեթղեհէմ, ուր դիմաւորուեցաւ Կառավարիչէն, քաղաքապետական մարմինէն, որուն մինչև կէս ճամբան ընդ առաջ էին եկած և ոստիկանութենէն։ Վանուց հրապարակին առջեւ կազմուեցաւ թափօր եւ «Խորհուրդ մեծ»ը երգուեցաւ սրտաթունդ։ — Առաջին անգամ այսօր հնչեցուեցան նաև հինգ զանգակները, որոնց համար վերջերս հայկական ճարտարապետութեամբ զանգակատուն էր շինուած վանքի մեր բաժինին վրայ։ Այս զանգակատան ելեքտրական եղանակումին ծախքը, 50 ոսկի, վճարած էր Տ. Մուշեղ Վրդ., որուն համար Ս. Պատրիարքը յայտնեց օրհնալից գոհունակութիւն։ — Կէսօրէ վերջ «Հրաշափառ»ով մուտք գործեցինք Ս. Ծննդեան պատմական մեծ Տաճարը։ — Ս. Պատրիարք Հայրը եւ Միաբանութիւնը ուխտ կատարեցին Ս. Այրին առջև, ապա ճրագալոյցի Ս. Պատարագը մատուցուեցաւ, վերը, մեր սեղանին առջև։ Ս. Պատրիարքը և Միաբանութենէն մաս մը դարձան Երուսաղէմ, Ս. Ծննդեան տօնը պաշտելու համար ի Ս. Յակոբ։

● 19 Յուն. — (Ս. Ծննդեան տօն). Գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ և ս. պատարագ տեղի ունեցան ի Բեթղեհէմ և Երուսաղէմ։ Բեթղեհէմի մէջ հանդիսապետեց, պատարագեց և քարոզեց Տ. Մեսրոպ Սրբազան։ Միւս ազգերուն պէս մեզ ևս պատեհութիւն տրուած ըլլալով ձայնասփիւռի, Ս. Այրին առջև երգուած «Փառք ի բարձունս»ին, Աւետարանին, միւս ամմունքներուն և «Խորհուրդ մեծ»ին և Լուսարարապետ Սրբազանի աւետարար պատգամին հաղորդ եղան Պաղեստինի և արտասահմանի ազգայիններէն և օտարներէն շատեր, որոնցմէ յետոյ ընդունուեցան գոհունակութեան բազմաթիւ գիրեր։ — Իսկ Երուսաղէմի մէջ, Ս. Պատրիարքը քարոզեց. ժամը ինին Բեթղեհէմէն վերադարձաւ Միաբանութիւնը, և «Այսօր տօն է Ս. Ծննդեան» երգով և «Խորհուրդ մեծ»ով ելաւ ի պատրիարքարան, ուր Ս. Պատրիարքը ընդունեց ամէնքը հայրական բարեմաղթութեամբ և օրհնութեամբ։

Շար.

Proprietor – His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem Armenian Patriarchate, Jerusalem.
Editor – Father Hayrik Aslanian. Armenian Convent, Jerusalem.